Ռեկտոր Կորյուն Աթոյանի խոսքը զինծառայության մեկնող, ինչպես նաև զինծառայությունից վերադարձող ՀՊՏՀ ուսանողներին

ՀՊՏՀ ռեկտոր Կորյուն Աթոյանն իր բարեմաղթանքի խոսքն է ուղղել գարնանային զորակոչին զինծառայության մեկնող ՀՊՏՀ ուսանողներին, ինչպես նաև զինծառայությունն ավարտած և Հայոց բանակից վերադարձած մեր բուհի ուսանողներին: Ռեկտորի խոսքը ներկայացնում ենք ստորև.

«Սիրելի ուսանողներ, քանի որ սկսվել է գարնանային զորակոչը, այս օրերին մեզ հաճախ են դիմում մեր բուհի բազմաթիվ երիտասարդներ՝ տարկետման իրավունք ստանալու և զինծառայության մեկնելու համար: Միաժամանակ բանակից զորացրված երիտասարդները դիմում են՝ ուսանողական իրենց իրավունքը վերականգնելու խնդրանքով:
Զինծառայության մեկնող մեր բոլոր ուսանողներին ես ցանկանում եմ խաղաղ ծառայություն և բարի վերադարձ: Վերջին շրջանում ես տարբեր զորամասերից մեր ուսանողների բարեխիղճ ծառայության մասին վկայող շնորհակալական նամակներ եմ ստանում, ինչը հպարտանալու առիթ է և մեծ պատիվ մեր համալսարանի համար: Նույն նամակների ակնկալիքներն ունեմ նաև այս տարի բանակ մեկնող մեր բոլոր ուսանողների ծառայությունից:
Ինչ վերաբերում է զինծառայությունից նոր վերադարձած մեր ուսանողներին, ապա հուսով եմ, որ նրանք շատ կարճ ժամանակաշրջանում կհարմարվեն ուսումնական գործընթացին: Նրանց ևս մաղթում եմ հաջողություններ ինչպես ուսման մեջ, այնպես էլ կյանքում»:

Հարգանքով՝ ՀՊՏՀ ռեկտոր
Կորյուն Աթոյան